

Լիճէն բաւական հեռու, էտ-ծամուս և Ուատի-
էտ-ձիքհաչ գտնուած բարձրութեան վրայ պետէվի-
ները երեք ծառերու (երկու բեկինի և մէկ յունապի,
այժմ անհետացած) es - sadjaret el mebarakât (օրհնեալ
ծառեր) անունը կուտան: Երբեմն ալ կը կարծուէր թէ
հին աւանդութիւն մը հոն կը փնտռէր լերան քարոզին
տեղը: Karge այս ծառերուն մօտ գտնելով կիկլոպեան
պատերու մասեր, ինչպէս նաև անուն մը՝ der mâkir,
կ'ուզէր նոյն տեղւոյն մասին հասկնալ Ֆրէտէլլուսի
ծանօթութիւնը, ինչպէս վերև յիշեցինք. թէպէտեւ
աւանդուած լերան զառիվայրը չի յառաջանար կա-
փառնառմի ճանապարհին վրայ՝ դէպի հացի հրաչքին
տեղը: Heidet կ'ենթագրէ թէ Յիսուս իր առաքեալ-
ները հոն ընտրեց և կը զատէ այն տեղը այս տեղէն
ուր Ան արտասանեց իր լերան քարոզը, այսինքն եօթն
ազբիւրներու բլուրը: Բայտ Meistermannի, աւանդու-
թիւնը հոս կը հաստատէ Երանութիւնները, բայց ա-
նոնց պատմական տեղը պէտք է փնտռել լիճին մօտ:
Ոմանց կարծիքին համաձայն, Աւետարանները անոր
մասին որոշ տեղ մը չեն սահմանած, և գոհ եղած են
միայն նշանակել Կափառնառմի վրայ գտնուած լեռ-
նոտ երկիրը՝ Յիսուսի կեանքին եւ գործունէութեան
մէջ իբր կարեւոր տեղ մը (Dal. էջ 209-211):

Հազեռու հրաշքի տեղւոյն աւանդութիւնը. — Զ. դա-
րուն Կափառնառմի «եօթն ազբիւրներու» մօտ ցոյց
կը տրուէր այն տեղը ուր Յիսուս հրաշալի կերպով
հինգ հազար անձեր կշտացուց: 670 ին Արգուլֆ եպոս.
ազբիւրներէն մէկուն մօտ տեսաւ շրջանակաձև սիւ-
ներ. անտարակոյս մարդիկ զանոնք կը նոյնացնէին
սիւներուն այն եկեղեցիին որ ըստ Պետրոս սարկա-